



Տնտեսական հնարավորությունների խթանման դրամաշնորհային (EOG) ծրագիր

Ծրագրի և ծրագրին դիմելու ուղեցույց

Խմբագրվել է՝ 11/04/23



Լոս Անջելես վարչաշրջանում տնտեսական հնարավորությունների խթանման դրամաշնորհային (Economic Opportunity Grant, EOG)

ծրագիրն առաջարկում է ավելի քան 54 միլիոն դոլարի չափով դրամաշնորհ միկրոբիզնեսի, փոքր բիզնեսի և շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար:

Լոս Անջելես վարչաշրջանի կողմից հովանավորվող Տնտեսական հնարավորությունների վարչությունը երկփուլ մոտեցում է նախատեսել EOG ծրագրին դիմելու գործընթացի համար:

50 000 դոլարից պակաս տարեկան եկամուտ ունեցող միկրոբիզնեսների համար դրամաշնորհային հայտերի ներկայացման 1-ին փուլի պորտալը բացվել է 2023 թվականի հունվարի 25-ին:

2 միլիոն դոլար կամ պակաս եկամուտ ունեցող փոքր բիզնեսների և միկրոբիզնեսների, ինչպես նաև 5 միլիոն դոլար կամ պակաս եկամուտ ունեցող շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար դրամաշնորհային հայտերի ներկայացման 2-րդ փուլի պորտալը բացվել է 2023 թվականի փետրվարի 23-ին:





Տնտեսական հնարավորությունների խթանման դրամաշնորհ

Փուլ 1

Միկրոբիզնեսի համար
դրամաշնորհներ

Բացում 2023 թվականի հունվարի 25




Փուլ 1

Միկրոբիզնեսի համար դրամաշնորհներ

\$2500-ի չափով մոտավորապես 4600 դրամաշնորհ կտրամադրվի Լոս Անջելես վարչաշրջանում, այդ թվում՝ Լոս Անջելես քաղաքում գտնվող **սահմանված չափանիշներին համապատասխանող միկրոբիզնեսներին**, որոնք բախվել են կապիտալ ռեսուրսների հասանելիության խոչընդոտների:

Ֆինանսավորվում է Կալիֆոռնիայի փոքր բիզնեսի շահերի պաշտպանության գրասենյակի դրամաշնորհային ծրագրով:



Փուլ 1. Համապատասխանության պահանջներ



«Սահմանված չափանիշներին համապատասխանող միկրոբիզնեսը» ենթադրում է **չահույթ հետապնդող տնտեսվարող սուբյեկտ**, որը համապատասխանում է և հավաստում է, որ համապատասխանում է հետևյալ **բոլոր** չափանիշներին՝ գիտակցելով, որ սխալ տեղեկություններ տրամադրելու դեպքում նրա նկատմամբ պատիժ է կիրառվելու՝

- 1. Միկրոբիզնեսը պետք է ունենա ֆիզիկական ներկայություն և գլխամասային գրասենյակ Կալիֆոռնիայի Լոս Անջելես վարչաշրջանում, այդ թվում Լոս Անջելես քաղաքում:
- 2. Միկրոբիզնեսը ներկայումս ակտիվ է և իր գործունեությունը սկսել է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:
- 3. Միկրոբիզնեսը զգալիորեն տուժել է COVID-19 համավարակի պատճառով:
- 4. 2019 հարկային տարում միկրոբիզնեսն ունեցել է **\$50 000-ից պակաս** եկամուտ:
- 5. Ներկայումս միկրոբիզնեսն ունի հինգ կամ հինգից պակաս լրիվ դրույքով աշխատող և 2019 ու 2020 հարկային տարիներին ունեցել է հինգ կամ հինգից պակաս լրիվ դրույքով աշխատող՝ համաձայն հարկային հայտարարագրերի, որոնք ինքնաատեստավորման միջոցով ներկայացրել է վավեր դիմումով:

- 6. Միկրոբիզնեսն այնպիսի ձեռնարկություն չէ, որը բացառված է Կալիֆոռնիայում COVID-19-ի հետևանքների մեղմանն ուղղված փոքր բիզնեսի աջակցության դրամաշնորհային ծրագրին մասնակցելուց, ինչպես նշված է 12100.82 բաժնի (g) ենթաբաժնի (2) կետում:
- 7. Միկրոբիզնեսի սեփականատերը պետք է տրամադրի կառավարության կողմից տրված լուսանկարով անձը հաստատող փաստաթղթի ընդունելի ձև, օրինակ՝
 - Վարորդական վկայական
 - Նահանգային ID կամ այլ պետության կառավարության կողմից տրված նույնականացման քարտ
 - Անձնագիր կամ միջազգային անձնագիր
- 8. Դրամաշնորհի համար դիմող միկրոբիզնեսի սեփականատերը պետք է լինի սահմանված չափանիշներին համապատասխանող միկրոբիզնեսի և 2019 հարկային տարում ստացված եկամտի հիմնական միջոցների գլխավոր սեփականատերը և կառավարիչը:
- 9. Միկրոբիզնեսի սեփականատերը չպետք է դրամաշնորհ ստացած լինի [Կալիֆոռնիայում COVID-19-ի հետևանքների մեղմանն ուղղված փոքր բիզնեսի աջակցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում](#):

Փուլ 1. Սահմանված չափանիշներին չհամապատասխանող բիզնեսներ



Բացի [այստեղ](#) թվարկված համապատասխանության պահանջներից՝ «**սահմանված չափանիշներին համապատասխանող միկրոբիզնեսի**» մեջ չեն մտնում այն կազմակերպությունները, որոնց համար կիրառելի են հետևյալ պայմանները՝

- 1. Կալիֆոռնիա նահանգում ֆիզիկական ներկայություն չունեցող և նահանգում գլխամասային գրասենյակ չունեցող բիզնեսներ,
- 2. Այն բիզնեսները, որոնք հիմնականում զբաղված են քաղաքական կամ լոբբիստական գործունեությամբ, անկախ նրանից՝ կազմակերպությունը գրանցված է որպես 501(c)(3), 501(c)(6), թե 501(c)(19),
- 3. Պասիվ բիզնեսները, ներդրումային ընկերություններն ու ներդրողները, որոնք իրենց հարկային հայտարարագրերը ներկայացնում են E հավելվածով,
- 4. Ֆինանսական հաստատությունները կամ բիզնեսները, որոնք հիմնականում զբաղվում են վարկավորման բիզնեսով, օրինակ՝ բանկերը, ֆինանսական ընկերությունները և ֆակտորինգային ընկերությունները,
- 5. Այն բիզնեսները, որոնք զբաղվում են ցանկացած գործունեությամբ, որն անօրինական է՝ համաձայն դաշնային, նահանգային կամ տեղական օրենսդրության,
- 6. Բիզնեսներ, որոնք սահմանափակում են հովանավորչությունը հնարավորությունից բացի ցանկացած այլ պատճառով,

- 7. Կասկածելի բիզնեսներ,
- 8. Բիզնեսներ, որոնց սեփականատիրոջ կապիտալի մասնաբաժինը կազմում է 10 տոկոսից ավելին, և որոնց սեփականատերը համապատասխանում է հետևյալ չափանիշներից մեկին կամ մի քանիսին՝
 - i. Սեփականատերը նախորդ երեք տարիների ընթացքում դատապարտվել է կամ սեփականատիրոջ դեմ կայացվել է քաղաքացիական դատավճիռ, կամ նրա նկատմամբ սկսվել է պայմանական վաղաժամկետ ազատման կամ փորձաշրջանի որևէ ձև, այդ թվում՝ մինչև դատավճիռը փորձաշրջան՝ խարդախության կամ քրեական հանցագործության համար՝ կապված դաշնային, նահանգային կամ տեղական հանրային գործարք կամ պայմանագիր կնքելու, կնքելու փորձի կամ հանրային գործարքի շրջանակներում դաշնային կամ նահանգային հակամենաշնորհային կամ գնումների կանոնադրության խախտման կամ յուրացման, գողության, կեղծիքի, կաշառակերության, փաստաթղթերի կեղծման կամ ոչնչացման, կեղծ տվյալների ներկայացման կամ գողացված գույք ձեռք բերելու հետ:
 - ii. Դաշնային, նահանգային կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սեփականատերը ներկայումս մեղադրվում է կամ այլ կերպ նրա դեմ քրեական կամ քաղաքացիական մեղադրանք է առաջադրվել՝ (i) կետում նշված հանցագործություններից որևէ մեկի կատարման համար:

Շարունակությունը՝ հաջորդ էջում



- 9. Փոխկապակցված ընկերություններ, Դաշնային կանոնակարգերի օրենսգրքի 13-րդ գլխի 121.103 բաժնում սահմանված կարգով, կամ
- 10. Կալիֆոռնիայի փոքր բիզնեսի շահերի պաշտպանության գրասենյակի կողմից (California Office of the Small Business Advocate, CalOSBA) ընտրված այլ բիզնեսներ, որոնք ենթակա են [COVID-19-ի հետևանքների մեղմանն ուղղված աջակցության դրամաշնորհային ծրագրի](#) նախորդ փուլերում սահմանված սահմանափակումներին և բացառություններին:

Փուլ 1. Միջոցների թույլատրելի օգտագործում



Սույն Ծրագրով դրամաշնորհի ստացող միկրոբիզնեսի սեփականատերը պետք է հավաստի, որ դրամաշնորհային միջոցներն օգտագործվելու են հետևյալ թույլատրելի նպատակներից մեկի կամ մի քանիսի համար՝

1. Նոր հավաստագրված սարքավորումների գնում, ներառյալ, բայց չսահմանափակվելով զամբյուղով
2. Ներդրումներ շրջանառու կապիտալում
3. Տեղական թույլտվության ստացման կամ երկարաձգման համար դիմում, ներառյալ, բայց չսահմանափակվելով մայթերին առևտրով զբաղվելու թույլտվությամբ
4. COVID-19 համավարակի պատճառով գոյացած բիզնեսի պարտքի վճարում
5. COVID-19 համավարակի և դրա հետ կապված առողջության պահպանման և անվտանգության նկատառումներով սահմանափակումների, բիզնեսի ընդհատումների կամ փակման հետևանքով առաջացած ծախսեր, որոնց պատճառը եղել է COVID-19 համավարակը՝ 12100.83 բաժնի (k) ենթաբաժնում սահմանված կարգով:

Փուլ 1. Դիմելու համար պահանջվող փաստաթղթեր



Սույն Ծրագրին դիմելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝

- 1. Հայտատուի հավաստագիր
- 2. 2019 թվականի ստորագրված և չփոփոխված դաշնային հարկային հայտարարագրեր (Վերբեռնեք ԲՈԼՈՐ Էջերը)
- 3. Պաշտոնական դիմում Կալիֆոռնիայի պետքարտուղարին (որը պետք է ակտիվ լինի) կամ տեղական համայնքապետարան, ըստ անհրաժեշտության, ձեր բիզնեսի մասին տեղեկություններով՝ կցված հետևյալ փաստաթղթերով՝
 - Ընկերության կանոնադրությունը,
 - Կազմակերպության վկայականը,
 - Կազմակերպության գրանցված ֆիկտիվ անվանումը,
 - Մանսագիտական գործունեությամբ զբաղվելու լիցենզիան,
 - Կառավարության կողմից տրված բիզնեսի լիցենզիան կամ թույլտվությունը:
 - Եթե ընթացիկ լիցենզիան հասանելի չէ, ապա բիզնեսի ժամկետանց լիցենզիան՝ դրա երկարացման համար վճարման ապացույցով:

- 4. Կառավարության կողմից տրված ID, որը պետք է վերբեռնված լինի Persona-ի միջոցով և ներառված լինի դիմումում: Կառավարության կողմից տրված ID-ների ընդունելի ձևեր՝
 - Վարորդական վկայական
 - Նահանգային ID կամ այլ պետության կառավարության կողմից տրված նույնականացման քարտ
 - ԱՄՆ անձնագիր կամ օտարերկրյա անձնագիր
- 5. Վավեր բանկային հաշիվ, որը պետք է կցված լինի Plaid-ով և ներառված լինի դիմումում:
 - Եթե հայտատուն չունի առցանց բանկինգի կարգավորում կամ նրա բանկային հաշիվը չի կարող ստուգվել Plaid-ով, ապա հայտատուից պահանջվում է ներկայացնել վերջին երկու (2) ամիսների բանկային քաղվածքները գործարքների պատմությամբ:
 - Նոր բանկային հաշիվները կընդունվեն բանկի կողմից հաշվի իսկությունը հաստատող նամակի հետ միասին:

Տնտեսական հնարավորությունների խթանման դրամաշնորհ

Փուլ 2

Միկորբիզնեսի, փոքր բիզնեսի
և շահույթ չհետապնդող
կազմակերպությունների համար
դրամաշնորհներ

Բացում 2023 թվականի փետրվարի 23

Ակնկալվող փակման ամսաթիվ՝ 2023 թվականի մայիսի 20




Փուլ 2. Համառոտ նկարագրություն



Փուլ 2

Փոքր բիզնեսի և շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար դրամաշնորհներ

Տնտեսական հնարավորությունների խթանման դրամաշնորհային ծրագրի (EOG) 2-րդ փուլը բաղկացած է չորս (4) դրամաշնորհային ծրագրից՝ աջակցելու համար Լոս Անջելես վարչաշրջանում գտնվող **սահմանված չափանիշներին համապատասխանող փոքր բիզնեսներին, միկրոձեռնարկություններին, սննդի արդյունաբերության ձեռնարկություններին (օրինակ՝ ռեստորաններ) և շահույթ չհետապնդող կազմակերպություններին:**



Փուլ 2. Համապատասխանության պահանջներ



Տնտեսական հնարավորությունների խթանման դրամաշնորհային ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում դրամաշնորհ ստանալու իրավունք ունենալու համար կազմակերպությունը պետք է համապատասխանի և հավաստի, որ համապատասխանում է հետևյալ բոլոր չափանիշներին՝ գիտակցելով, որ սխալ տեղեկություններ տրամադրելու դեպքում նրա նկատմամբ պատիժ է կիրառվելու՝

1. Կազմակերպությունն իրենից ներկայացնում է այսպիսի բիզնես՝

i. «Սահմանված չափանիշներին համապատասխանող միկրոբիզնես».

Շահույթ չհետապնդող բիզնես՝ առնվազն 100 000 դոլարից պակաս տարեկան համախառն եկամուտով, որը ֆիզիկական ներկայություն ունի Լոս Անջելես վարչաշրջանում բացառությամբ Լոս Անջելես քաղաքի: Լոս Անջելես վարչաշրջանում փողոցային առևտրով զբաղվող անձը կարող է համապատասխանել չափանիշներին՝ չունենալով բիզնեսի ֆիզիկական գտնվելու վայր:

Փողոցային առևտրով զբաղվող անձը՝ նա է, ով վաճառում է սննդամթերք կամ ապրանքներ սալյակից, ստենդից, ցուցափեղկից, ոտնակավոր սալյակից, ֆուրգոնից, ցուցափեղկից, դարակաշարից կամ այլ ոչ շարժիչային տրանսպորտային միջոցից կամ հենց ինքը՝ հանրային մայթի կամ այլ հետիոտնային ճանապարհի վրա՝ ֆիքսված վայրում կամ տեղաշարժվելով:
- ii. «Սահմանված չափանիշներին համապատասխանող փոքր բիզնես».

Շահույթ չհետապնդող բիզնես՝ առնվազն 100 000 և առավելագույնը 2 միլիոն դոլար տարեկան համախառն եկամուտով, որը ֆիզիկական ներկայություն ունի Լոս Անջելես վարչաշրջանում բացառությամբ Լոս Անջելես քաղաքի:

- iii. «Սահմանված չափանիշներին համապատասխանող շատ փոքր շահույթ չհետապնդող կազմակերպություն».

Շահույթ չհետապնդող սոցիալական ծառայություններ տրամադրող՝ 501(c)(3), 501(c)(4), 501(c)(6) կամ 501(c)(19) կատեգորիայի, որը ծառայություններ է մատուցում ցածր և միջին եկամուտ ունեցող համայնքներին, որոնք տուժել են COVID-19-ից: Այս շահույթ չհետապնդող կազմակերպություններն ունեն 1 միլիոն դոլարից պակաս տարեկան համախառն եկամուտ: Այստեղ մտնում են Առևտրի պալատները՝ 501(c)(6) կամ 501(c)(19) կատեգորիայի, և այն կազմակերպությունները, որոնք տրամադրում են ծառայություններ՝ կապված բնակարանային ապահովման, պարենային անապահովության, տրանսպորտային փոխադրման, բնապահպանության, արդարադատության, անօթևանության, առողջապահության և այլ խնդիրների հետ:
- iv. «Սահմանված չափանիշներին համապատասխանող փոքր շահույթ չհետապնդող կազմակերպություն».

Շահույթ չհետապնդող սոցիալական ծառայություններ տրամադրող՝ 501(c)(3), 501(c)(4), 501(c)(6) կամ 501(c)(19) կատեգորիայի, որը ծառայություններ է մատուցում ցածր և միջին եկամուտ ունեցող համայնքներին, որոնք տուժել են COVID-19-ից: Այստեղ մտնում են 1 միլիոն դոլարից ավելի և առավելագույնը 5 միլիոն դոլար տարեկան համախառն եկամուտ ունեցող շահույթ չհետապնդող կազմակերպությունները, որոնք տրամադրում են ծառայություններ՝ կապված բնակարանային ապահովման, պարենային անապահովության, տրանսպորտային փոխադրման, բնապահպանության, արդարադատության, անօթևանության, առողջապահության և այլ խնդիրների հետ:

Շարունակությունը՝ հաջորդ էջում

Փուլ 2. Համապատասխանության պահանջներ



2. Կազմակերպությունը սկսել է գործունեությունը մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ը, ինչպես նշված է բիզնեսի լիցենզիայում կամ նմանատիպ փաստաթղթում:
3. **Փոքր բիզնեսը կամ միկրոբիզնեսը** պետք է ունենա ֆիզիկական ներկայություն և աշխատի Լոս Անջելես վարչաշրջանում **բազառությամբ** Լոս Անջելես քաղաքի՝ ներկայացնելով համապատասխան բիզնեսի լիցենզիա կամ փաստաթուղթ՝ գտնվելու վայրը հաստատելու համար: **Շահույթ չհետապնդող կազմակերպությունները** պետք է ունենան ֆիզիկական ներկայություն Լոս Անջելես վարչաշրջանում կամ այնտեղ ներառված քաղաքներում (**առ. թվում**՝ Լոս Անջելես քաղաքում)՝ ներկայացնելով համապատասխան բիզնեսի լիցենզիա կամ փաստաթուղթ՝ գտնվելու վայրը հաստատելու համար:

 - Բիզնեսի ֆիզիկական հասցե չունեցող փողոցային առևտրով զբաղվող անձինք կարող են դիմել՝ ներկայացնելով համապատասխան տան հասցե:
 - Մենդի արդյունաբերությամբ զբաղվող բիզնեսները կարող են ներկայացնել այն հասցեն, որը գրանցված է Լոս Անջելես վարչաշրջանի Հանրային առողջապահության վարչությունում <http://www.publichealth.lacounty.gov/>, և ներկայումս պետք է ունենան «C» կամ ավելի բարձր տեսչական ստուգման գնահատական կամ անցած լինեն Լոնգ Բիչ (Long Beach) քաղաքի Առողջապահության վարչության կողմից ստուգում <https://www.longbeach.gov/health/>, կամ ներկայացնեն Փասադենա (Pasadena) քաղաքի ռեստորանների և հաստատությունների տեսչական ստուգման (www.decadeonline.com) ամփոփ հաշվետվությունը, որտեղ նշված է, որ բիզնեսը խնդիրներ չունի:
4. Կազմակերպությունը չպետք է նախկինում դրամաշնորհ ստացած լինի Վարչաշրջանի ARP-ի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, եթե բիզնեսը նշել է միջոցների նույն նպատակով օգտագործումը, ինչ նախկին դրամաշնորհի դիմումում կամ ինքնաաւտեստավորման գործընթացի համար:

Շարունակությունը՝ հաջորդ էջում

Փուլ 2. Սահմանված չափանիշներին չհամապատասխանող բիզնեսներ



Բացի [այստեղ](#) թվարկված իրավունակության պահանջներին համապատասխանողներից՝ «սահմանված չափանիշներին համապատասխանող փոքր բիզնեսների, միկրոձեռնարկությունների, սննդի արդյունաբերությամբ զբաղվող ձեռնարկությունների (օրինակ՝ ռեստորանների) և շահույթ չհետապնդող կազմակերպությունների» մեջ չեն մտնում բիզնեսի հետևյալ տեսակները՝

- 1. Հանրային առևտրային ընկերություններ,
- 2. Կորպորատիվ սեփականություն հանդիսացող ֆրանչիզա,
- 3. Ֆինանսական հաստատություններ, ինչպիսիք են բանկերը, վարկային կազմակերպությունները, «մինչև աշխատավարձի վճարման օրը» վարկ տրամադրող կազմակերպությունները, մեքենայի գրավով վարկ տրամադրող կազմակերպությունները, չեկերի կանխիկացման կետերը, այլ բիզնեսներ, որոնց գործունեությունը կապված է գումարների և հիփոթեքի հետ և այլ նմանատիպ կազմակերպություններ,
- 4. Ապահովագրական ընկերություններ՝ կապված կյանքի, ավտոմեքենաների, տան, գրավների հետ և այլ նմանատիպ կազմակերպություններ,
- 5. Մասնավոր կամ սոցիալական ակումբներ,
- 6. Գրավատներ,
- 7. Աստղագուշակությամբ, ձեռնագուշակությամբ զբաղվող ընկերություններ,

- 8. Ալկոհոլային խմիչքների խանութներ, գիշերային ակումբներ,
- 9. Լոբբիստական ընկերություններ կամ բիզնեսներ, որոնք իրենց ժամանակի կամ ռեսուրսների 50%-ը կամ ավելին հատկացնում են լոբբիստական գործունեությանը,
- 10. Բիզնեսներ, որոնք զբաղվում են խաղային գործունեությամբ, օրինակ՝ Բինգո խաղի սրահներ, խաղատներ,
- 11. Կցավագոն-պահեստներ կամ մեքենաների աղբանոցներ,
- 12. Բիզնեսներ, որոնք ներկայացնում են սեռական բնույթի կենդանի կատարումներ,
- 13. Բիզնեսներ, որոնք ստեղծում են եկամուտ Նահանգային կամ դաշնային օրենքների խախտմամբ իրականացվող գործունեությամբ, ներառյալ մարիխուանայի վաճառքը, մշակումը կամ փոխադրումը,
- 14. Բիզնեսներ, որոնց գործունեությունն ուղղված է կուսակցական-քաղաքական գործունեությունն առաջ մղելուն,
- 15. Զենքի կամ զինամթերքի պահեստներ,
- 16. Միացյալ Նահանգների կառավարության օրենքներով արգելված կամ կասեցված բիզնես կամ կազմակերպություն, կամ
- 17. 18 տարեկանից ցածր անձանց պատկանող բիզնեսներ:

Փուլ 2. Միջոցների թույլատրելի օգտագործում



Սույն Ծրագրից դրամաշնորհի ստացողը պետք է հավաստի, որ դրամաշնորհային միջոցներն օգտագործվելու են հետևյալ թույլատրելի նպատակներից մեկի կամ մի քանիսի համար՝

- 1. Աշխատակիցների աշխատավարձի ծախսեր:
- 2. Շրջանառու կապիտալ՝ գործունեությունը շարունակելու համար:
- 3. Բիզնեսի չմարված ծախսերի վճարում (վարձույթ, մատակարարների կառավարում և այլն):
- 4. COVID-19 համավարակի և դրա հետ կապված առողջության պահպանման և անվտանգության նկատառումներով սահմանափակումների, բիզնեսի ընդհատումների կամ փակման հետևանքով առաջացած ծախսեր, որոնց պատճառը եղել է COVID-19 համավարակը:

Փուլ 2. Դիմելու համար պահանջվող փաստաթղթեր



Սույն ծրագրին դիմելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝

1. Հայտատուի հավաստագիր
2. Եկամուտների ապացույց. 2019, 2020 կամ 2021 թվականների ստորագրված և չփոփոխված դաշնային հարկային հայտարարագրեր (վերբեռնեք ԲՈԼՈՐ Էջերը)
 - Շահույթ հետապնդող բիզնեսներ. IRS ձև 1040, 1065, 1120 կամ 1120-S
 - Շահույթ չհետապնդող կազմակերպություններ. IRS ձև 990, 990-Z կամ 990-N
3. Միայն շահույթ չհետապնդող կազմակերպություններ. IRS 501(c)(3), 501(c)(6) և 501(c)(19) հարկային փաստաթղթերի պատճեն

4. Բիզնեսի կազմակերպման ապացույց. Պաշտոնական դիմում Կալիֆոռնիայի պետքարտուղարին (որոնք պետք է ուժի մեջ լինեն) կամ տեղական համայնքապետարան, ինչպես կիրառելի է տվյալ բիզնեսի տեսակի համար՝ բիզնեսի մասին տեղեկություններով: Կարող է ներկայացվել հետևյալ փաստաթղթերից մեկը՝
 - Ընկերության կանոնադրությունը,
 - Կազմակերպության վկայականը,
 - Ֆիկտիվ անվանումով կազմակերպության գրանցման փաստաթուղթը,
 - Գործընկերության համաձայնագիրը,
 - Մասնագիտական գործունեությամբ զբաղվելու լիցենզիան,
 - Կառավարության կողմից տրված բիզնեսի լիցենզիան կամ թույլտվությունը:
 - Եթե ընթացիկ լիցենզիան հասանելի չէ, ապա բիզնեսի ժամկետանց լիցենզիան՝ դրա երկարացման համար վճարման ապացույցով:
5. Կառավարության կողմից տրված ID, որը պետք է վերբեռնված լինի Persona-ի միջոցով և ներառված լինի դիմումում: Կառավարության կողմից տրված ID-ների ընդունելի ձևեր՝
 - Վարորդական վկայական
 - Նահանգային ID կամ այլ պետության կառավարության կողմից տրված նույնականացման քարտ
 - ԱՄՆ անձնագիր կամ օտարերկրյա անձնագիր

Շարունակությունը՝ հաջորդ էջում

6. Վավեր բանկային հաշիվ, որը պետք է կցված լինի Plaid-ով և ներառված լինի դիմումում:
- Եթե հայտատուն չունի առցանց բանկինգի կարգավորում կամ նրա բանկային հաշիվը չի կարող ստուգվել Plaid-ի միջոցով, ապա հայտատուից պահանջվում է ներկայացնել վերջին երկու (2) ամիսների բանկային քաղվածքները գործարքների պատմությամբ:
 - Նոր բանկային հաշիվների համար պետք է ներկայացվի բանկի կողմից հաշվի իսկությունը հաստատող նամակ:



Ինչպես լրացնել Հայտատուի հավաստագիրը



Որպես դիմումի գործընթացի մաս, ձեզանից կպահանջվի վեր հավելվածում և օժանդակ փաստաթղթերում հաստատել ձեր տրամադրած տեղեկատվության ճշմարտացիությունն ու ճշգրտությունը՝ ստորագրելով Հայտատուի հավաստագիրը:

Հայտատուի հավաստագիրը հասանելի կլինի էլեկտրոնային եղանակով, որպեսզի դուք այն ներբեռնեք և լրացնեք: Հայտատուի ստորագրած հավաստագիրը պարտադիր փաստաթուղթ է այս դրամաշնորհային ծրագրի գործընթացում և պետք է վերբեռնվի պորտալում PDF ձևաչափով:

Դուք կարող եք լրացնել Հայտատուի հավաստագիրը երկու եղանակով՝


1. Ստորագրել հավաստագիրը էլեկտրոնային եղանակով ձեր վեբ գննարկիչում, այնուհետև ներբեռնել PDF ֆայլը և վերբեռնել այն համակարգում, կամ
2. Տպել և լրացնել ձևը ձեռքով:

Ինչպես լրացնել Հայտատուի հավաստագիրը էլեկտրոնային եղանակով




Քայլ 1

Սեղմեք ներբեռնման պատկերակը՝ ներբեռնելու և պահպանելու համար Հայտատուի հավաստագիրը ձեր սարքում: ⬇




Քայլ 2

Գտեք Հայտատուի հավաստագիրը ձեր սարքում և բացեք ֆայլն այնտեղից: Հայտատուի հավաստագիրը կբացվի PDF ֆայլի տեսքով:



Քայլ 3

Լրացրեք Հայտատուի հավաստագիրը՝ մուտքագրելով ձեր անվան սկզբնատառերը բոլոր համարակալված նիշերի կողքին, այնուհետև մուտքագրելով ձեր ստորագրությունը և բիզնեսի տվյալները վերջին էջում:



Քայլ 4


Հայտատուի հավաստագիրը լրացնելուց հետո կրկին այն պահպանեք՝ անցնելով Ֆայլ > Պահպանել կամ ստեղծագծարի վրա սեղմելով CTRL+S:

Քայլ 5

Վերբեռնեք լրացված Հայտատուի հավաստագիրը պորտալում PDF ձևաչափով դիմումի ներկայացման ժամանակ:

Քայլ 1

Տպեք Հայտատուի հավաստագիրը՝ սեղմելով տպիչի պատկերակը: 



Քայլ 2

Լրացրեք Հայտատուի հավաստագիրը ընթերցելի ձեռնագրով՝ մուգ գույնի գրիչով:

Քայլ 3

Սկանավորեք լրացված Հայտատուի հավաստագիրը ձեր համակարգչում/սարքում և պահպանեք այն որպես PDF ֆայլ:

Քայլ 4

Վերբեռնեք լրացված Հայտատուի հավաստագիրը պորտալում PDF ձևաչափով դիմումի ներկայացման ժամանակ:



Պահանջվող փաստաթղթերի օրինակներ



24 1040

1040	Department of the Treasury Internal Revenue Service (99)	2019	OMB No. 1545-0047 IRS Use Only—Do not write or staple in this space.
U.S. Individual Income Tax Return			
Filing status.	☐ Single ☐ Married filing jointly ☐ Married filing separately (MFS) ☐ Head of household (HOH) ☐ Qualifying widow(er) (QW) If you checked the MFS box, enter the name of spouse. If you checked the HOH or QW box, enter the child's name if the qualifying person is a child but not your dependent.		
Your first name and middle initial	Last name	Your social security number	
If joint return, spouse's first name and dependent initial	Last name	Spouse's social security number	
Home address (number and street). If you have a P.O. box, see instructions.		Apt. no.	Presidential Election Campaign Check one: If you select this box, your tax will go to the fund. If you do not select this box, we will send it to the President-Elect. ☐ Yes ☐ No
City, town, or office state, and ZIP code. If you have a foreign address, also complete spaces below (see Instructions).			
Foreign country name	Foreign province/state/country	Foreign postal code	
Standard Deduction	Someone can claim: ☐ You are a dependent ☐ Your spouse as a dependent ☐ Spouse claiming a child even when you are married ☐ If at all possible, check this box. See instructions.		
Age/Blindness	Yes ☐ Were born before January 2, 1953 ☐ Am blind No ☐ Spouse ☐ Was born before January 2, 1953 ☐ Is disabled (see Instructions). Dependents (See Instructions): (a) Social security number (b) Relationship to you (c) Number of dependents (see Instructions). (d) First name Last name Other last name Check for other dependents		
Standard Deduction	1 Wages, salaries, tips, etc. Attach Form(s) W-2 1 2 Tax-exempt interest 2a 2b Taxable interest. Attach Sch. B, if required 2b 3 Qualified dividends 3a 3b Ordinary dividends. Attach Form 8879, if required 3b 4 IRA distributions 4a 4b Taxable amount 4b 5 Pensions or annuities 5a 5b Taxable amount 5b 6 Social Security benefits 6a 6b Taxable amount 6b 7 Capital gain or loss. Attach Schedule D, if required. If not required, check here 7 8 Other income from Schedule 1, line 9 8 9 Add lines 1 through 8, 2a, 3a, 4a, 5a, 6a, 7a, and 8a. This is your total income 9 10 Adjusting to income from Schedule 1, line 2 10 Subtract line 10 from line 9. This is your adjusted gross income 10 11 Standard deduction or itemized deductions from Schedule A 11 12 Qualified business expense deduction. Attach Form 8865 if Form 990-A 12 13 Add lines 9 and 11 13 14 Taxable income 14 * If you checked "Married filing jointly," attach Form 990. See instructions.		
For Disclosure, Privacy Act, and Paperwork Reduction Act Notice, see separate instructions.		Cat. No. 11355B	Form 1040 (99)

Օրինակ՝ Դիմում Կալիֆոռնիայի պետքարտուղարին կամ տեղական համայնքապետարան



Ընկերության կանոնադրությունը

3767456

ARTICLES OF INCORPORATION
OF
MIDDLE TREE INCORPORATED

FILED
Secretary of State
State of California
16 MAR 16 2015

ARTICLE I

The name of this corporation is Middle Tree Incorporated ("Corporation").

ARTICLE II

A. This Corporation is a nonprofit public benefit corporation and is not organized for the private gain of any person. It is organized under the Nonprofit Public Benefit Corporation Law for public and charitable purposes. The specific purpose of this Corporation is to manage, operate, guide, direct and promote the Corporation.

B. This Corporation is organized and operated exclusively for educational and charitable purposes pursuant to and within the meaning of Section 501(c)(3) of the Internal Revenue Code of 1986, as amended (the "Code" or "I.R.C."), or the corresponding provision of any future United States Internal Revenue law. Notwithstanding any other provision of these articles, the Corporation shall not, except to an insubstantial degree, engage in other activities or exercise of power that do not further the purpose of the Corporation. The Corporation shall not carry on any other activities not permitted to be carried on by: (i) a corporation exempt from federal income tax under Section 501(c)(3) of the Code, or the corresponding section of any future federal tax code; or (ii) by a corporation, contributions of which are deductible under Section 170(c)(2) of the Code, or the corresponding section of any future federal tax code.

ARTICLE III

The name and address in the State of California of this Corporation's initial agent for service of process is: Registered Agents Inc.

ARTICLE IV

The initial street address of the corporation is:

Middle Tree
522 S. Indian Hill Blvd #205
Claremont, CA
91711

The initial mailing address of the corporation is:

ARTICLES OF INCORPORATION
MIDDLE TREE INCORPORATED

PAGE 1 OF 3

Կազմակերպության գրանցված ֆիկտիվ անվանումը

LARRY W. WARD
COUNTY OF RIVERSIDE
ASSESSOR-COUNTY CLERK-RECORDER
P.O. Box 751, Riverside, CA 92502-0751 • (951) 480-7000
62-473 Hwy. 51, Rm. 312, Indio, CA 92201 • (760) 865-4732

OFFICE OF THE COUNTY CLERK

FICTITIOUS BUSINESS NAME STATEMENT

COUNTY CLERK'S FILING STAMP

SEE REVERSE SIDE FOR FEES AND INSTRUCTIONS

THE FOLLOWING PERSON(S) IS (ARE) DOING BUSINESS AS:

3a. Fictitious Business Name (If more than one business name or name address - Attach Supplemental Sheet)

3b. NAME OF COUNTY in which business is located

3c. Register Information (only for state of Calif. LLC filing as such)

3d. Register Information (only for state of Calif. LLC filing as such)

3e. Register Information (only for state of Calif. LLC filing as such)

3f. Register Information (only for state of Calif. LLC filing as such)

3g. This business is conducted by:

4. I declare that all the information in this statement is true and correct. (A registrant who declares as true, information which he or she knows to be false is guilty of a crime.)

5. Signature(s)

Typed or Printed Name(s)

NOTICE: IN ACCORDANCE WITH SUBDIVISION OF SECTION 17800, A FICTITIOUS BUSINESS NAME STATEMENT GENERALLY EXPIRES AT THE END OF FIVE YEARS FROM THE DATE ON WHICH IT WAS FILED IN THE OFFICE OF THE COUNTY CLERK. EXCEPT AS PROVIDED IN SUBDIVISION OF SECTION 17800, WHEN IT EXPIRES AS SET FORTH AFTER AND BEFORE AS THE FACTS SET FORTH IN THIS STATEMENT. PURSUANT TO SECTION 17800, OTHER THAN A CHANGE IN THE RESIDENCE ADDRESS OF A REGISTRANT, A NEW FICTITIOUS BUSINESS NAME STATEMENT MUST BE FILED BEFORE THE EXPIRATION. THE FILING OF THIS STATEMENT DOES NOT OF ITSELF AUTOMATICALLY END THE USE OF THE NAME OF A FICTITIOUS BUSINESS NAME IN VIOLATION OF THE RIGHTS OF ANOTHER FEDERAL, STATE OR COMMON LAW (SEE SECTION 17801 ET SEQ., BUSINESS AND PROFESSIONAL CODE).

NOTARIAL CERTIFICATE: NONE

NOTARIAL CERTIFICATE: NONE

Ճարուսակությունը՝ հաջորդ էջում

Օրինակ՝ Դիմում Կալիֆոռնիայի պետքարտուղարին կամ տեղական համայնքապետարան



Կազմակերպության վկայականը

Կառավարության կողմից տրված բիզնեսի լիցենզիան

Միայն անհատ ձեռնարկատերերի համար

Ճարուևակությունը՝ հաջորդ էջում

Օրինակ՝ Դիմում Կալիֆոռնիայի պետքարտուղարին կամ տեղական համայնքապետարան



Վաճառողի թույլտվություն

DISPLAY CONSPICUOUSLY AT PLACE OF BUSINESS FOR WHICH ISSUED

CALIFORNIA STATE BOARD OF EQUALIZATION

SELLER'S PERMIT

ACCOUNT NUMBER _____



NOTICE TO PERMITTEE:
You are required to obey all Federal and State laws that regulate or control your business. This permit does not allow you to do otherwise.

IS HEREBY AUTHORIZED PURSUANT TO **SALES AND USE TAX LAW** TO ENGAGE IN THE BUSINESS OF SELLING TANGIBLE PERSONAL PROPERTY AT THE ABOVE LOCATION. THIS PERMIT IS VALID ONLY AT THE ABOVE ADDRESS.

THIS PERMIT IS VALID UNTIL REVOKED OR CANCELED AND IS NOT TRANSFERABLE. IF YOU SELL YOUR BUSINESS OR DROP OUT OF A PARTNERSHIP, NOTIFY US OR YOU COULD BE RESPONSIBLE FOR SALES AND USE TAXES OWED BY THE NEW OPERATION OF THE BUSINESS.

Not valid at any other address

For general tax questions, please call our Information Center at 800-400-7115.
For information on your rights, contact the Taxpayers' Rights Advocate Office at 888-324-2798 or 916-324-2798.

BOE-442-R REV. 15 (2-09)

Օրինակ՝ Կառավարության կողմից տրված լուսանկարով անձը հաստատող փաստաթուղթ (ID)



Կառավարության կողմից տրված ID-ների ընդունելի ձևեր



Վարորդական
վկայական



Այլ պետության
կառավարության
կողմից տրված
նույնականացման
քարտ



Անձնագիր

- ID-ի հետևյալ ձևերը **չեն** ընդունվելու՝
- Ժամկետանց ID-ներ
 - Ավտոբուսի ուղետոմսեր
 - Դպրոցի ID-ներ
 - Միության ID-ներ
 - Աշխատանքային բեյջեր
 - Գրադարանային քարտեր



Դիմումը ներկայացնելու խորհուրդներ



Խորհուրդ #1. Օգտագործեք վավեր էլփոստի հասցե



Համոզվեք, որ վավեր էլփոստի հասցե եք նշել, և որ այն ճիշտ է գրված դիմումում:

- Ձեր դիմումի հետ կապված թարմացումները և լրացուցիչ ուղեցույցները կուղարկվեն ձեր տրամադրած էլփոստի հասցեին: Որոշ էլփոստի հասցեներ չեն կարող ճանաչվել Lendistry-ի համակարգի կողմից, ինչը կարող է հանգեցնել ձեր դիմումի հետ կապված հաղորդակցության ուշացումներին:

Եթե ձեր դիմումում նշել եք սխալ կամ անվավեր էլփոստի հասցե, կապ հաստատեք Lendistry-ի զանգերի կենտրոնի հետ (866) 238-0516 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ (7:00-19:00, PST):

Նոր դիմում ՄԻ՛ ներկայացրեք: Մի քանի դիմում ներկայացնելը կարող է դիտվել որպես հնարավոր խարդախություն և խաթարել ձեր դիմումի քննման գործընթացը:

Անվավեր էլփոստի հասցեներ

Հետևյալ էլփոստի հասցեները մեր համակարգը չի ընդունի կամ ճանաչի՝

Էլփոստի հասցեներ, որոնք *սկսվում են* **info@-ով**
Օրինակ՝ info@mycompany.com

Էլփոստի հասցեներ, որոնք *վերջանում են* **@contact.com-ով** կամ **@noreply.com-ով**
Օրինակ՝ mycompany@contact.com
Օրինակ՝ mycompany@noreply.com



Պահանջվող բոլոր փաստաթղթերը հարկավոր է վերբեռնել պորտալում միայն PDF ձևաչափով: Վերբեռնելիս փաստաթղթերը պետք է լինեն պարզ, ուղիղ դիրքով և չպարունակեն խանգարող հետնապատկերներ:

- Կարևոր դիտողություններ՝ փաստաթղթերի վերբեռնման հետ կապված.
1. Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն PDF ձևաչափով (Կառավարության կողմից տրված ինքնությունը հաստատող փաստաթուղթը կարող է ներկայացվել PDF կամ JPEG ձևաչափով):
 2. Ֆայլի չափը պետք է լինի 15 ՄԲ-ից փոքր:
 3. Ֆայլի անվան մեջ ՉԻ ԿԱՐՈՂ լինել որևէ հատուկ նիշ (!@#\$%^&*()_+):
 4. Եթե ձեր ֆայլը պաշտպանված է գաղտնաբառով, դուք պետք է մուտքագրեք այն:

Չունե՞ք սկաներ:
Խորհուրդ ենք տալիս ներբեռնել և օգտվել անվճար սկանավորման բջջային հավելվածից:

Genius սկանավորում
Apple | [Սեղմեք այստեղ](#)
[Ներբեռնելու համար](#)
Android | [Սեղմեք այստեղ](#)
[Ներբեռնելու համար](#)


Adobe սկանավորում
Apple | [Սեղմեք այստեղ](#)
[Ներբեռնելու համար](#)
Android | [Սեղմեք այստեղ](#)
[Ներբեռնելու համար](#)

Օրինակ՝ ճիշտ վերբեռնում




Փաստաթուղթը պետք է հստակ երևա, լինի ուղիղ դիրքով:

Օրինակ՝ Միսալ վերբեռնում



1



2

1. Փաստաթուղթը ուղիղ դիրքով չէ:
2. Փաստաթուղթը պահել են պատուհանի դիմաց (շեղող ֆոն), և լուսանկարում ձեռք է երևում:

Խորհուրդ #3. Հետևեք Persona-ով հաջողությամբ ինքնության ստուգումն անցնելու խորհուրդներին





- Ի՞նչ է իրենից ներկայացնում Persona-ն**
- Persona-ն երրորդ կողմի հարթակ է, որից օգտվում է Lendistry-ն՝ խարդախության կանխարգելման և դրա հետևանքների մեղմացման համար: Persona հարթակը Lendistry-ին հնարավորություն է տալիս ստուգել անձի ինքնությունը և պաշտպանել այն կեղծելուց՝ անձի ինքնանկարն ավտոմատ կերպով համեմատելով նրա ID-ի դիմանկարի հետ՝ 3-կետանոց կոմպոզիտային և կենսաչափական տվյալների իսկության ստուգում կատարելով:
- Հայտատուները պետք է հաստատեն իրենց ինքնությունը Persona-ի միջոցով՝ վերբեռնելով կառավարության կողմից տրված վավեր անձը հաստատող փաստաթղթի (ID) լուսանկարը: Կառավարության կողմից տրված լուսանկարով ID-ների ընդունելի ձևերի մեջ մտնում են՝
 - Վարորդական վկայական
 - Նահանգային ID կամ այլ պետության կառավարության կողմից տրված նույնականացման քարտ
 - ԱՄՆ անձնագիր կամ օտարերկրյա անձնագիր
 - Հայտատուները պետք է նաև ինքնանկար անեն՝ օգտագործելով դիմահայաց դիրքով լուսանկարող տեսախցիկով սարք՝ Persona-ով ստուգումն անցնելու համար:

- Persona-ով հաջողությամբ ինքնության ստուգումն անցնելու խորհուրդներ**
- Օգտագործեք դիմահայաց դիրքով լուսանկարող սարք: Եթե դուք աշխատում եք հավելվածում նոութբուքով կամ համակարգչով, որը չունի տեսախցիկ, ձեզ կառաջարկվի տարբերակ ցանկացած պահի անցնել ստուգումը Persona-ով շարժական սարքով՝ սեղմելով «Շարունակել մեկ այլ սարքով» և սկանավորելով տրամադրված QR կոդը կամ խնդրելով հղում ուղարկել SMS-ով կամ էլփոստով:
 - Երբ անցնեք ստուգումը Persona-ով ձեր շարժական սարքով, դուք ավտոմատ կերպով կվերահղվեք ձեր հավելվածը՝ ձեր նոութբուքով կամ համակարգչով:
 - Արդյունավետության համար *Նախքան* Persona-ն գործարկելը՝ լուսանկարեք կառավարության կողմից տրված ձեր ID-ի երեսակողմն ու դարձերեսը և պահպանեք լուսանկարներն այն սարքում, որով ինքնանկար եք անելու:
 - Դրեք կառավարության կողմից տրված անձը հաստատող փաստաթուղթը հարթ սպիտակ մակերեսին և ապահովեք համապատասխան լուսավորություն:
 - Մի՛ օգտագործեք ֆլեշ, քանի որ այն կարող է ցուլքեր առաջացնել:
 - Ինքնանկար անելիս ապահովեք բավարար լուսավորություն՝ ձեր դեմքին ուղղված խուսափելով հետևից վառ լույսի աղբյուրներից:
 - Կանգնեք դատարկ պատի կամ դռան առջև և խուսափեք շեղող ֆոնից:
 - Մի՛ օգտագործեք ֆլեշ, քանի որ այն կարող է ցուլքեր առաջացնել:





Քայլ 1

Սեղմեք **«Սկսել ստուգումը»**, այնուհետև ընտրեք կառավարության կողմից տրված ID-ն, որը ցանկանում եք օգտագործել՝ ձեր ինքնությունը հաստատելու համար:



Քայլ 2



Լուսանկարեք կամ վերբեռնեք ձեր ID-ի լուսանկարի **երեսակողմը**: Շարունակելու համար ընտրեք «Օգտագործել այս ֆայլը»: Տե՛ս [31-րդ էջը](#)՝ այս քայլը կատարելու լավագույն փորձի համար:







Քայլ 3

Լուսանկարեք կամ վերբեռնեք ձեր ID-ի լուսանկարի **դարձերեսը**: Շարունակելու համար ընտրեք «Օգտագործել այս ֆայլը»: Տե՛ս [31-րդ էջը](#)՝ այս քայլը կատարելու լավագույն փորձի համար:



Քայլ 4

Եթե օգտագործում եք **դիմահայաց դիրքով** լուսանկարող տեսախցիկով սարք, հետևեք Էկրանի հուշումներին ինքնանկար անելիս՝ նայելով առաջ, ձախ և հետո աջ: Տե՛ս [31-րդ էջը](#)՝ այս քայլը կատարելու լավագույն փորձի համար: Ավարտելուց հետո ընտրեք «Կատարված» և կվերահղվեք հավելվածը:





Լավ աշխատանքի համար օգտվեք Google Chrome-ից դիմումի ներկայացման ամբողջ գործընթացի ընթացքում:

Ուրիշ վեբ գննարկիչներ կարող են չաջակցել մեր ինտերֆեյսը և սխալներ թույլ տալ ձեր դիմումում:

Եթե դուք չունեք Google Chrome ձեր սարքում, կարող եք այն անվճար ներբեռնել այստեղից՝ <https://www.google.com/chrome/>:

Նախքան դիմումին անցնելը՝ կատարեք հետևյալ գործողությունները Google Chrome-ում

- 1. Մաքրեք ձեր քեշ (գերօպերատիվ) հիշողությունը
- 2. Օգտագործեք ինկոգնիտո ռեժիմը
- 3. Ապաակտիվացրեք բացվող պատուհանների արգելափակիչը

Մաքրեք ձեր քեշ (գերօպերատիվ) հիշողությունը

Քեշ հիշողության մեջ պարունակվող տվյալներն այն տեղեկություններն են, որոնք պահպանվել են նախկինում օգտագործած վեբկայքից կամ հավելվածից և հիմնականում կիրառվում են գննարկման գործընթացն ավելի արագ դարձնելու համար՝ տեղեկություններն ավտոմատ կերպով լրացնելով: Սակայն, քեշ հիշողության մեջ պարունակվող տվյալները կարող են ներառել նաև հնացած տեղեկություններ, օրինակ՝ հին գաղտնաբառեր կամ նախկինում սխալ մուտքագրած տեղեկություններ: Սա կարող է սխալների առաջացման պատճառ դառնալ ձեր դիմումում և կարող է հանգեցնել նրան, որ դիմումը հնարավոր խարդախության կասկած հարուցի:

Օգտագործեք ինկոգնիտո ռեժիմը

Ինկոգնիտո ռեժիմը թույլ է տալիս գաղտնի մուտքագրել ինֆորմացիան և թույլ չի տալիս, որպեսզի ձեր ինֆորմացիան հիշվի կամ պահպանվի քեշ հիշողությունում:

Ապաակտիվացրեք բացվող պատուհանների արգելափակիչը


Մեր դիմումաձևում կան բազմաթիվ բացվող պատուհաններով հաղորդագրություններ, որոնք կիրառվում են ձեր տրամադրած տեղեկատվության ճշգրտությունը հաստատելու համար: Այս հաղորդագրությունները տեսնելու համար դուք պետք է ապաակտիվացնեք բացվող պատուհանների արգելափակիչը Google Chrome-ում:

Ինչպես մաքրել քեզ հիշողությունը




Քայլ 1

Բացեք Google Chrome-ի նոր պատուհան, սեղմեք վերևի աջ անկյունում գտնվող երեք կետերը և անցեք «Կարգավորումներ»:




Քայլ 2

Անցեք «Գաղտնիություն և անվտանգություն», այնուհետև ընտրեք «Մաքրել զննարկման տվյալները»:



Քայլ 3

Ընտրեք «Մաքրել տվյալները»:




Ինչպես օգտագործել ինկոգնիտո ռեժիմը




Քայլ 1

Սեղմեք ձեր վեբ զննարկիչի վերևի աջ անկյունում գտնվող երեք կետերը, այնուհետև ընտրեք «**Նոր ինկոգնիտո պատուհան**»:



Քայլ 2


Ձեր զննարկիչը կբացի Google Chrome-ի նոր պատուհան: Օգտագործեք ինկոգնիտո ռեժիմը՝ դիմումի լրացման ամբողջ գործընթացում:






Քայլ 1

Բացեք Google Chrome-ի նոր պատուհան, կտտացրեք վերևի աջ անկյունում գտնվող երեք կետերին և անցեք «Կարգավորումներ»:




Քայլ 2

Անցեք «Գաղտնիություն և անվտանգություն», այնուհետև ընտրեք «Կայքի կարգավորումներ»:



Քայլ 3

Ընտրեք «Բացվող պատուհաններ և վերահղումներ»: Սեղմեք կոճակը, որպեսզի այն կապույտ դառնա, և կարգավիճակը փոխվի «Արգելափակվածից» դառնալով «Թույլատրված»:





Ինչպես մուտք գործել EOC ծրագիր




Ինչպես բացել դիմում



1. Դուք կարող եք մուտք գործել Տնտեսական հնարավորությունների խթանման դրամաշնորհային (EOG) ծրագիր՝ այցելելով grants.lacounty.gov: Այս կայքում դուք կարող եք.

- [Ստանալ դիմումը ներկայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը,](#)
- [Ստանալ օգնություն և](#)
- [Դիմում ներկայացնել:](#)

Դիմում բացելու համար ընտրեք «**ԴԻՄՏԷԼ ՀԻՄԱ**» գլխավոր էջում: Դուք կվերահղվեք Lendistry-ի կողմից աջակցվող հավելվածների պորտալը:






Բարի գալուստ Lendistry-ի պորտալ



- 1 Դիմում բացելու համար հարկավոր է «Բացել նոր հաշիվ»:
- 2 Գրանցեք այն կազմակերպության սեփականատիրոջ կողմից օգտագործվող հիմնական էլ. հասցեն, որի համար դիմում եք: Այստեղ դուք կստանաք կարևոր տեղեկություններ և թարմացված տեղեկատվություն ձեր դիմումի վերաբերյալ:
- 3 Lendistry-ի պորտալ մուտք գործելու համար անհրաժեշտ է բազմագործոն նույնականացում: Ամեն անգամ մուտք գործելիս ձեր գրանցած բջջային հեռախոսահամարին կուղարկվի հաստատման կոդ: Դուք պետք է մուտքագրեք այս կոդը՝ պորտալի ձեր հաշիվ մուտք գործելու համար:
- 4 Պորտալում դուք հնարավորություն կունենաք լրացնելու ձեր միկրոբիզնեսի դրամաշնորհի դիմումը, վերբեռնելու պահանջվող փաստաթղթերը և ստուգելու ձեր բանկային հաշիվն ու ինքնությունը: Դուք նաև ցանկացած պահի կարող եք մուտք գործել պորտալ՝ ձեր դիմումի կարգավիճակը ստուգելու համար:

Եթե նախկինում դիմել եք 1-ին փուլի համար, ընտրեք «**Մուտք գործել գոյություն ունեցող հաշիվ**»՝ 2-րդ փուլին հասանելիություն ստանալու համար: Եթե ձեզ անհրաժեշտ է օգնություն պորտալի ձեր հաշիվ մուտք գործելու կամ պորտալի հաշիվ ստեղծելու համար, խնդրում ենք կապ հաստատել Lendistry-ի Զանգերի կենտրոնի հետ **(866) 238-0516** հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ, (7:00-19:00, PST):



Գրանցեք ձեր էլփոստի հասցեն և հեռախոսահամարը:

Մուտքագրեք հաստատման կոդը:

Երբ դուք մուտք գործեք ձեր պորտալի հաշիվ, հասանելի կլինի երեք դիմումաձև: Ընտրեք այն դիմումաձևը, որն առավել համապատասխան է ձեր բիզնեսի տեսակին և եկամտի չափին:

- 1 Միկրոբիզնեսները**, ինչպես սահմանված է [այստեղ](#), **շահույթ չհետապնդող բիզնեսներ** են, որոնք ունեցել են **50 000 դոլարից պակաս** տարեկան համախառն եկամուտ 2019 հարկային տարում: Այս բիզնեսները պետք է դիմեն **1-ին փուլի համար՝ Դրամաշնորհներ միկրոբիզնեսի համար:**
- 2 Փոքր բիզնեսները**, ինչպես սահմանված է [այստեղ](#), **շահույթ չհետապնդող բիզնեսներ** են, որոնք ունեցել են **2 միլիոն դոլարից պակաս** տարեկան համախառն եկամուտ 2019, 2020 կամ 2021 հարկային տարում: Այս բիզնեսները պետք է դիմեն **2-րդ փուլի համար՝ Դրամաշնորհներ փոքր բիզնեսի համար:**
- 3 Շահույթ չհետապնդող կազմակերպությունները**, ինչպես սահմանված է [այստեղ](#), **շահույթ չհետապնդող սոցիալական ծառայություններ տրամադրող ընկերություններ են՝ 501(c)(3), 501(c)(6) կամ 501(c)(19) կատեգորիայի**, որոնք ունեցել են **5 միլիոն դոլարից պակաս** տարեկան համախառն եկամուտ 2019, 2020 կամ 2021 հարկային տարում: Այս բիզնեսները պետք է դիմեն **2-րդ փուլի համար՝ Դրամաշնորհներ շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար:**

<

>

+

⌵

Programs available

1

Apply for Phase 1 - Microbusiness Grants

For-profit business with less than \$50,000 in annual gross revenue receipts in the 2019 taxable year.

2

Apply for Phase 2 - Small Business Grants

For-profit business with annual gross revenue of under \$2 million based on 2019, 2020, or 2021 taxable years.

3

Apply for Phase 2 - Nonprofit Grants

A nonprofit social service provider with a 501(c)(3), 501(c)(6) or 501(c)(19) designation with annual gross revenue of under \$5 million based on 2019, 2020, or 2021 taxable years.



Դիմում 1-ին փուլի համար՝ Դրամաշնորհներ միկրոբիզնեսի համար





Ներկայացրեք ձեր բիզնեսի սեփականատիրոջ տվյալները:

- Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի անունը
- Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի ազգանունը
- Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի էլ. հասցեն
- Բնակության հասցեի 1-ին տող (փոստային կոդը չնշել)
- Բնակության հասցեի 2-րդ տող (փոստային կոդը չնշել)
- Բնակության քաղաք
- Բնակության նահանգ
- Բնակության փոստային կոդ
- Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի ծննդյան ամսաթիվը
- Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի սոցիալական ապահովության կամ հարկ վճարողի անհատական նույնականացման համարը (SSN կամ ITIN)¹
- Սեփականության տոկոսը (%)
- Ուղղորդող գործընկեր²
- Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի նախընտրելի հեռախոսահամարը
- SMS-ի/տեքստային հաղորդագրության հետ կապված քաղաքականություն³

¹Անպայման հարկավոր է հավաստիանալ, որ հայտատուն ներառված չէ OFAC-ի ցուցակում:
²Ձեր նշած ուղղորդող գործընկերը չի ազդի ձեր դիմումի վրա:
³Նշեք վանդակը, եթե ցանկանում եք թարմացված տեղեկատվություն ստանալ ձեր դիմումի վերաբերյալ SMS-ով/տեքստային հաղորդագրությամբ՝ դիմումի քննարկման գործընթացի ժամանակ:



Պատմեք մեզ ձեր ընկերության մասին:

- Բիզնեսի իրավաբանական անվանումը
- Բիզնեսը գործում է որպես--- (DBA)՝ (Մուտքագրեք N/A, եթե ձեր բիզնեսի համար կիրառելի չէ DBA-ն:)
- Ձեր բիզնեսն ունի՞ գործատուի նույնականացման համար (EIN):
- Բիզնեսի հասցեի 1-ին տող (Մուտքագրեք բիզնեսի ֆիզիկական հասցեն)
- Բիզնեսի հասցեի 2-րդ տող (Մուտքագրեք բիզնեսի ֆիզիկական հասցեն)
- Բիզնեսի քաղաքը
- Բիզնեսի նահանգը
- Բիզնեսի փոստային կոդը
- Բիզնեսի հեռախոսահամարը
- Ձեր ձեռնարկությունը շահույթ չհետապնդո՞ղ, թե՞ շահույթ հետապնդող բիզնես է:
- Բիզնես սուբյեկտի տեսակը
- Բիզնեսի կազմակերպչական ձևը
- Բիզնեսը հիմնելու ամսաթիվը
- Բիզնեսի կայքի URL. (Մուտքագրեք N/A, եթե ձեր բիզնեսը չունի կայք:)

Պաշտոնական
ներկայացուցչի
տվյալներ

Բիզնեսի
վերաբերյալ
տեղեկություն
ներ - 1

Բիզնեսի
վերաբերյալ
տեղեկություն
ներ - 2

Ժողովրդագր
ական
տվյալներ

Քաղաքը և
պատասխաններ
տվյալների
բացահայտման
վերաբերյալ

Ինքնության
ստուգում

Վերջին փաստաթղթ
եր

Բանկային
տվյալներ

Tell us about your company

We want to get to know you.

Legal Business Name *

Doing Business As (DBA) - (Please type N/A if not applicable) *

Does your business have an EIN? *

Business Address Line 1 (Please enter physical address of business) *

Business Address Line 2 (Please enter physical address of business)

Business City *

Business State *

Business Zip Code *

Business Phone Number *

Are you a Non-Profit or For-Profit business? *

Business Entity Type *

State of Formation *

Date Business Established *

Business Website URL - (Please type N/A if not applicable) *

Save and Continue Later

Continue

Terms and Conditions

Platform/Website Terms of Use

Privacy Policy

Authenticators and Consents

Borrowers' Bill of Rights

About Lendistry

About Us

Customer Stories

Contact Us

Lendistry Call Center

Instructions

Application Guide

© 2023 CBO. All Rights Reserved.

Funded in part through a Grant from the California Office of the Small Business Advocate.

Լոս Անջելես վարչաշրջանի
Տնտեսական հնարավորությունների խթանման
դրամաշնորհային (EOG) ծրագիր

44



Ինչո՞վ կարող եմք ձեզ օգնել:

- Դրամաշնորհի առաջնային օգտագործումը
- Տարեկան համախառն եկամուտը 2019 թվականին (այն պետք է համապատասխանի ձեր հարկային հայտարարագրին)
- Ներկայումս լրիվ դրույքով աշխատողների թիվը

Պաշտոնական
ներկայացուցչի
տվյալներ

Բիզնեսի
վերաբերյալ
տեղեկություններ - 1

Բիզնեսի
վերաբերյալ
տեղեկություններ - 2

Ժողովրդագրական
տվյալներ

Քաղցրեք և
պատասխաններ
տվյալների
բացահայտման
վերաբերյալ

Ինքնուրույն
ստուգում

Վերջին
փաստաթղթեր

Բանկային
տվյալներ

How can we help you?

Primary Use of Grant *

Select an option

Annual Gross Receipts for 2019 (this should match your tax return) *

of Current Full-time Employees *

Save and Continue Later

Continue

Terms and Conditions

Platform/Website Terms of Use

Privacy Policy

Authenticators and Consents

Borrowers' Bill of Rights

About Lendistry

About Us

Customer Stories

Contact Us

Lendistry Call Center

Instructions

Application Guide

© 2023 CBO. All Rights Reserved.

Funded in part through a Grant from the California Office of the Small Business Advocate.



Պատմեք մեզ ձեր ընկերության մասին:

Միայն ժողովրդագրական տվյալների համար: Ձեր պատասխանը չի ազդի ձեր դիմումի քննարկման գործընթացի վրա:

- Ովքե՞ր են ձեր հիմնական հաճախորդները
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (NAICS) ԿՈԴԸ
- Բիզնեսը կնո՞ջ է պատկանում
- Բիզնեսը վետերանի՞ է պատկանում
- Բիզնեսը հաշմանդամություն ունեցող անձի՞ է պատկանում
- Բիզնեսը LGBTQIA+ ներկայացուցչի՞ է պատկանում
- Հայտատուի նախընտրած անունը
- Հայտատուի ռասան
- Հայտատուի էթնիկ պատկանելությունը

Պաշտոնական
ներկայացուցչի
տվյալներ

Բիզնեսի
վերաբերյալ
տեղեկություն
եր - 1

Բիզնեսի
վերաբերյալ
տեղեկություն
ներ - 2

Ժողովրդագր
ական
տվյալներ

Քաղաքը և
պատասխաններ
տվյալների
բացմանը
վերաբերյալ

Ինքնության
ստուգում

Վերջին
փաստաթղթ
եր

Բանկային
տվյալներ

How can we help you?

Who is your customer base? *

Select an option

NAICS Code *

Obtain Your NAICS Code

Women-Owned *

Select an option

Veteran-Owned *

Select an option

Disabled-Owned *

Select an option

LGBTQIA+ Owned? *

Select an option

Applicant Preferred Name *

Applicant Race *

Select an option

Applicant Ethnicity *

Select an option

Save and Continue Later

Continue

Terms and Conditions

Platform/Website Terms of Use

Privacy Policy

Authorizations and Consents

Borrowers' Bill of Rights

About Lendistry

About Us

Customer Stories

Contact Us

Lendistry Call Center

Instructions

Application Guide

© 2023 CBO. All Rights Reserved.

Funded in part through a Grant from the California Office of the Small Business Advocate.

Եվս մի քանի հարց, որոնք կօգնեն պարզել ձեր իրավունակությունը:

- Դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ արդյո՞ք ձեր բիզնեսը բաց է և գործում է:
 - Բիզնեսը պետք է բաց լինի և գործի, որպեսզի այս ծրագրին մասնակցելու իրավունք ունենա:
- Արդյո՞ք ձեր բիզնեսն ընդհանուր առմամբ համապատասխանում է դաշնային, նահանգային և տեղական կիրառելի օրենքներին, կանոնակարգերին, օրենսգրքերին և պահանջներին:
 - Դիմելու իրավունք ունենալու համար բիզնեսը պետք է համապատասխանի դաշնային, նահանգային և տեղական բոլոր օրենքներին և կանոնակարգերին:
- Արդյո՞ք դուք ինքնուրույն եք կազմում ձեր բիզնեսի հարկային հայտարարագրերը: Եթե դուք չեք կազմում ձեր սեփական հարկային հայտարարագրերը, ապա պետք է նշեք ձեր հարկային հայտարարագրերը կազմող անձի անունը և կոնտակտային հեռախոսահամարը:
- Արդյո՞ք ձեր բիզնեսում ներկայումս կա հինգ կամ պակաս լրիվ դրույքով աշխատող, ԵՎ արդյո՞ք դուք 2019 ու 2020 հարկային տարիներին ունեիք հինգ կամ պակաս լրիվ դրույքով աշխատող: (Երկու պնդումն էլ պետք է ճշմարիտ լինեն՝ այս հարցին «այո» պատասխանելու համար):
 - 50 000 դոլարից պակաս տարեկան համախառն եկամուտ ունեցող միկրոբիզնեսները պետք է ունենան 5-ից պակաս աշխատակից, որպեսզի իրավունք ունենան այս ծրագրին մասնակցելու:
- Արդյո՞ք դուք բիզնեսի գլխավոր սեփականատերն եք և կառավարիչը, ԵՎ արդյո՞ք բիզնեսը ձեր եկամտի հիմնական միջոցն էր 2019 հարկային տարում: (Երկու պնդումն էլ պետք է ճշմարիտ լինեն՝ այս հարցին «այո» պատասխանելու համար:)
- Արդյո՞ք եղել եք Կալիֆոռնիայում COVID-19-ի հետևանքների մեղմման ուղղված փոքր բիզնեսի աջակցության դրամաշնորհի ստացող (<https://calosba.ca.gov/about/publications/>):

Պաշտոնական ներկայացուցչի տվյալներ

Բիզնեսի վերաբերյալ տեղեկություններ - 1

Բիզնեսի վերաբերյալ տեղեկություններ - 2

Ժողովրդագրական տվյալներ

Հարցեր և պատասխաններ տվյալների բացահայտման վերաբերյալ

Ինքնության ստուգում

Վերջին փաստաթղթեր

Բանկային տվյալներ

